ԿԱՆՈՆՆԵՐ

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ միջազգային գնացքներով ուղևորների փոխադրման

1. Գնացքով ճանապարհորդելիս ուղևորները պարտավոր են պահպանել հասարակական կարգը և ճանապարհորդության կանոնները:

2. Ուղևորն իրավունք ունի.

2.1. Զբաղեցնել վագոնի այն տեղերը, որոնց համարները նշված են ճամփորդական փաստաթղթում:

2.2. Անվճար փոխադրել 5 տարեկանից ոչ բարձր մեկ երեխա, առանց առանձին տեղ զբաղեցնելու: Ուղևորի հետ մինչև 5 տարեկան մեկից ավելի երեխա կամ մինչև 5 տարեկան մեկ երեխա առանձին տեղ զբաղեցնելու դեպքում, ինչպես նաև 5-10 տարեկան յուրաքանչյուր երեխայի համար ձեռք են բերվում մանկական ճամփորդական փաստաթղթեր: Ուղ ևորը, որի հետ ճամփորդում է մինչև 10 տարեկան երեխա, պետք է ունենա երեխայի անձնագիր:

2.3. Անվճար իր հետ փոխադրել 36 կգ-ից ոչ ավելի քաշով ձեռքի ուղեբեռ մեկ ճամփորդական փաստաթղթի (տոմսի) առկայության դեպքում, որը չափումների գումարով չի գերազանցում 200 սմ-ը և իր չափերով տեղավորվում է մարդատար վագոնների այն վայրերում, որոնք նախատեսված են ձեռքի ուղեբեռի տեղադրման համար՝ ելնելով վագոնի կառուցվացքային առանձնահատկություններից:

2.4. Որպես ձեռքի ուղեբեռ թույլատրվում է նաև ծալվող մանկական և հաշմանդամի սայլակների փոխադրումը, եթե երեխան կամ սահմանափակ շարժունակությամբ անձը, որոնց համար նախատեսված են սայլակները, ճամփորդում են գնացքով:

2.5. 36 կգ-ից ավելի ձեռքի ուղեբեռ փոխադրել, որի ընդհանուր զանգվածը չի գերազանցում 50 կգ-ը, ավելորդ ձեռքի ուղեբեռի համար տոմսարկղում լրացուցիչ ճամփորդական փաստաթղթի ձևակերպմամբ այն նույն վագոնում, որով ուղևորը ճամփորդում է:

2.6. Փոխադրել ընտանի կենդանիներ (շներ, կատուներ, թռչուններ), համապատասխան անասնաբուժական փաստաթղթերի առկայության դեպքում, հատուկ տարայի մեջ՝ հաշվի առնելով ձեռքի ուղեբեռի թույլատրելի չափը, կուպեում բոլոր տեղերի լրիվ դրույքաչափով տոմսերի գնման պայմանով

Չի թույլատրվում փոհադրել տեղափոխելու համար հատուկ կոնտեյների մեջ չտեղավորվող խոշոր շներ:

2.7. Գրավոր գրառում կատարել կարծիքների և առաջարկությունների գրքում, որը գտնվում է գնացքի պետի (կցասայլային վագոնի ուղեկցորդի) մոտ և տրամադրվում է առաջին իսկ պահանջով:

2.8. Տվյալ գնացքում ճամփորդական փաստաթղթի առկայության դեպքում նստել ցանկացած վագոն՝ հետագա անցում կատարելով իր նստատեղին, եթե ուղևորը չի կարողացել նստել ճամփորդական փաստաթղթում նշված վագոնում:

2.9. Տեղեկատվություն ստանալ մատուցվող ծառայությունների ցանկի, արժեքի, գնացքի ժամանակացույցի վերաբերյալ:

3. Գնացքի վագոնում երթևեկելիս ուղևորը չի կարող:

3.1. Տեղափոխվել այլ դասի կամ կատեգորիայի վագոն, նույնիսկ եթե այնտեղ դատարկ տեղեր կան:

3.2. Ճանապարհին կանգառ կատարել՝ ճանփոչդական փաստաթղթի վավերականությունը երկարացնելու համար:

3.3. Առանց համապատասխան ճամփորդական փաստաթղթերի երթևեկել, ինչպես նաև առանց արտոնյալ երթևեկության իրավունքը հաստատող փաստաթղթերի իրականացնել ավելորդ ձեռքի ուղեբեռի փոխադրում:

4. Գնացքի վագոնում երթևեկելիս արգելվում է

4.1. Վագոնների աստիճաններին և տանիքներին երթևեկել, գնացքի շարժման ժամանակ նստել և իջնել, առանց թույլտվության օգտագործել վթարային արգելակը:

4.2 Ձեռքի ուղեբեռը տեղադրել վագոնների միջանցքներում, կուպեների մուտքերի համար խոչընդոտներ ստեղծել:

4.3. Գնացքում ծխելն արգելվում է:

4.4 Դուրս նետել աղբը վագոնների պատուհաններից և դռներից, աղտոտել միջանցքները և կուպեները:

4.5. Վնասել վագոնի ներսի սարքավորումները, գույքը, անկողնային պարագաները և վագոնների ապակիները:

4.6. Բացի ընտանի կենդանիներից (շներ, կատուներ, թռչուններ) տեղափոխել այլ կենդանիներ:

4.7. Փոխադրել առարկաներ, որոնք կարող են վնասել կամ աղտոտել վագոնը, այլ ուղևորներին կամ նրանց իրերը, հրդեհավտանգ, դյուրավառ, ինքնայրվող, պայթուցիկ, ռադիոակտիվ, կաուստիկ և թունավոր նյութեր, լիցքավորված զենք, առարկաներ, որոնք կարող են վարակ առաջացնել կամ տհաճ հոտ ունենալ, իրեր, որոնց փոխադրումը չի թույլատրվում մաքսային և այլ կանոնակարգերով:

4.8. Խոչընդոտներ ստեղծել գնացքի անձնակազմի, գնացքի աշխատակիցների, մաքսային, սահմանային և սահմանված հսկողության այլ տեսակների աշխատակիցների համար:

4.9. Խախտել պետության ազգային օրենսդրությամբ սահմանված հասարակական կարգի նորմերը, որով գնացքը անցնում է։

5. Ուղևորության կանոնների 3.10-րդ կետը չպահպանող անձինք ուղևորության ընթացքում կարող են գնացքից հեռացվել անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից: Այդ անձանց փոխադրման վճարները չեն վերադարձվում, ճամփորդական փաստաթղթում կատարվում է համապատասխան նշում։

6. Ուղևորն ինքը պետք է հոգ տանի ձեռքի ուղեբեռի ամբողջականության և անվտանգության մասին։

7. Ուղևորն ամբողջությամբ պատասխանատվություն է կրում իր կողմից տեղափոխվող ընտանի կենդանիների (շներ, կատուներ, թռչուններ) սանիտարահիգիենիկ պահանջների խախտման համար և պարտավոր է ապահովել նրանց համապատասխան մաքրությունը։

8. Ուղևորը պարտավոր է պահպանել անձնագրային և վարչական (այդ թվում՝ վիզային), մաքսային և այլ կանոններ, որոնք երկաթուղային տրանսպորտով երթևեկելիս սահմանված են միջազգային հաղորդակցությունում ինչպես իր, այնպես էլ իր ձեռքի ուղեբեռի, ուղեբեռի և տեղափոխվող կենդանիների (շների, կատուների, թռչունների) նկատմամբ:

9. Տեղական ժամանակով ժամը 22:00-ից մինչև 9:00-ն չի թույլատրվում խախտել մարդատար գնացքի վագոնով ճամփորդող ուղևորների անդորրն ու հանգիստը (չի թույլատրվում ձայնային սարքերի օգտագործումը, բղավոցներ, սուլոցներ, երգել, երաժշտական գործիքների վրա նվագել և այլ նմանատիպ գործողություններ)։

10. Երկաթուղային ադմինիստրացիայի /կամ փոխադրող ընկերության ներկայացուցիչները/ գնացքի երթևեկության ճանապարհին ապահովում են ուղևորների անվտանգությունն ու սպասարկումը, ստեղծում են հանգստի համար անհրաժեշտ հարմարություններ, քաղաքավարի և բարեհամբյուր են ուղևորների հետ և նրանց պահանջով տրամադրում են կարծիքների և առաջարկությունների գիրքը:

11. Գնացքով ճանապարհորդելիս ուղեկցորդները պարտավոր են.

11.1. Ուղևորներին տրամադրել անկողնային պարագաներ՝ սահմանված վճարի դիմաց, որը ներառված է ուղևարձի մեջ:

11.2. Ուղևորի ցանկությամբ անկողին պատրաստել շարժունակության խնդիր ունեցող անձանց համար, տարեց ուղևորների և փոքր երեխաներով ուղևորների համար, ինչպես նաև երկտեղանոց խցիկներով վագոններում (SV, լյուքս) և ֆիրմային գնացքների վագոններում:

Հավաքել օգտագործված անկողնային սպիտակեղենը, երբ ուղևորները լքեն վագոնը: Ուղևորների թույլտվությամբ անկողնային սպիտակեղենը կարող է հավաքվել ուղևորի նշանակման վայր հասնելուց ոչ շուտ, քան 30 րոպե առաջ:

11.3. Ճանապարհին ապահովել սահմանված ձևաթղթով տրված ճամփորդական փաստաթղթերի պահպանումը:

11.4. 30 րոպեից ոչ ուշ տեղեկացնել ուղևորներին գնացքի մոտենալու մասին իրենց նշանակման կայարան:

11.5. Տրամադրել անվճար եռացրած ջուր (տաք և սառեցված) ամբողջ ճանապարհորդության ընթացքում:

11.6. Ապահովել վագոնների պահպանումը պատշաճ սանիտարահիգիենիկ վիճակում, կատարել վագոնների, սանտեխնիկայի, աղբամանների ժամանակին և որակյալ մաքրում:

117. Բաց պահել սանհանգույցները - էկոլոգիապես մաքուր զուգարանային համալիրով կահավորված վագոնում - ամբողջ ճանապարհին՝ բացառությամբ տվյալ վագոնում սահմանային և մաքսային հսկողության անցկացման ժամանակ:

Առաջին օգնություն ցուցաբերել ուղևորին և անհրաժեշտության դեպքում շտապ օգնություն կանչել մոտակա երկաթուղային կայարանում:

Նախապես տեղեկացնել ուղևորներին սահմանային և մաքսային հսկողության առաջիկա անցման, ինչպես նաև դրա իրականացման կարգի մասին:

Հարավկովկասյան երկաթուղու կոնտակտային կենտրոն էլ. փոստ՝ mail@railway.am, տեղեկատվական և տեղեկատու ծառայություն հեռ. (+374 60) 46 32 83, (+374 60) 46 32 84, 1-84, իրավիճակային օգնության տրամադրում 151 կամ (+374 60) 46 34 40: